ԱՎԱԶԱԿՆԵՐԻ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ՄԱՍԻՆ ՂԱԶԱԽԻ ԳԱՎԱՌՈՒՄ

(«Նովոյե օբոզրենիայի» թղթակցությունը»)

Հաջիքենդի մոտ ուղևորներին կողոպտելուց հետո, Ղազախի փախստականները[1] որոնց, ինչպես պիտի ենթադրել, Ելիզավետպոլի գավառի փախստականներն էին հրավիրել, օգոստոսի 12-ին ուղևորվեցին Ելիզավետպոլի գավառ՝ ճանապարհին մի շարք կողոպուտներ անելով, որոնց մասին արդեն մի շարք հաղորդումներ են տպագրվել «Նովոյե օբոզրենիայում»։ Ղազախի գավառի սահմանագծում ավազակները բաժանվեցին երկու խմբի, որոնցից մեկը՝ թվով 5 մարդ, Ղազախի մոտից գնաց դեպի ոստիկանական 2-րդ տեղամաս, իսկ մյուս երեքը գնացին դեպի Կոգոշկերտ գյուղ, որտեղ տեղավորվեցին փախստականներից մեկի՝ Մաշադի Ալիարի այգում։ Գավառապետ Ի. Խ. Կանչալին, որը հետապնդում էր փախստականների 5 հոգուց բաղկացած խմբին, տագլինյան երկաթուղային կայարանի պետից հեռագիր ստացավ այն մասին, որ չարագործները տեղավորվել են հիշյալ Մաշադի Ալիարի այգում։ Գավառապետն այդ հեռագիրը հանձնեց իր աստիճանավորներից մեկին՝ Կենբալանին, որը, ձիավորներ առած, գնաց փախստականներին բռնելու, բայց հիշյալ այգին հասնելով, այնտեղ այլևս ոչ ոքի չգտավ։ Կավլարսարլուում և Ելիզավետպոլի ու Ղազախի գավառների սահմանագլխում հայտնաբերվել է կողոպտված իրերի մի մասը՝ կտորեղեն ապրանքներ, ինչպես նաև մի թամբած ձի։ Գավառապետը շարունակել է հետապնդել փախստականներին։ Նրանց հետքերը կորել են, սակայն օգոստոսի 18-ի լույս 19-ի գիշերը գավառապետն իր գործակալների միջոցով տեղեկություն է ստացել, որ փախստականները օգոստոսի 18-ին եկել են հայկական Ակսիբարա գյուղ՝ Եվինով Խեչոյի տուն և այնտեղ թաքնվել։ Գավառապետը, որ այդ ժամանակ գտնվել է Ակսիբարայից 30 վերստ հեռու, Ղամարլու գյուղում, իր զորախմբով, որը կազմված էր տեղամասի պահակախմբից, ուղեբաժնի պարեկներից և կազակների ջոկատից՝ գրենադերյան գնդի պարուչիկ Կաչևսկու հրամանատարությամբ, ուղևորվել է

[1] Այստեղ այդպես են կոչվում բոլոր դատից ու քննություններից խույս տվողներն ու տաժանավայրերից փախած հանցագործները։

Ակսիբարա, ուր և հասել է առավոտյան ժամը 5-ին։ Հետապնդողները, 4 խմբի բաժանվելով, բոլոր կողմերից շրջապատել են Խեչո Եվինովի տունը։ Դա տեսնելով, ավազակ Խեչոյի մայրը ընդառաջ է ելել և խնդրել մի քանի րոպե տուն չմտնել, որպեսզի տան կանայք հնարավորություն ունենան հագնվելու։ Միաժամանակ նա քնած փախստականներին տեղեկացրել է սպառնացող վտանգի մասին։ Փախստականները հագնվելով ու զինվելով, մի քանի անգամ տանից կրակել են ու դուրս վազել, որ թաքնվեն մոտիկ անտառում։ Հետապնդողների և փախստականների միջև սկսվել է համառ փոխհրաձգություն, որի ավարտից հետո պարզվել է, որ սպանվել են 2 փախստական՝ Խեչո Եվինովը և նրա ընկեր Նաբին, իսկ կազակ Բաբիչն ու Եվինովի մայրը վիրավորվել են։ Սպանված փախստականների ընկերները՝ Դադաշ Նաջաֆ-օղլին (Նաբիի եղբայրը), Կուրումսուլու գյուղի բնակիչ, փախստական զինվոր Եգոր Պապիևը, իրականում Ղամբար Մամեդ-օղլին, որը կոչվել է Իսմայիլ Լիլիա-օղլի, Խեչոյի տանը չեն հայտնաբերվել։ Նրանց գտնելու համար ձեռք են առնվել եռանդուն միջոցներ։ Սպանված Եվինովի տունը խուզարկելիս գտել են մի քանի ժամացույց, ատրճանակներ, սպիտակեղեն, Գևորգյան խաչ, որը պատկանել է կամ ուղեմասի պետ Գեղևանովին, կամ ոստիկանական պրիստավի օգնական Մելիք-Օսիպովին, և Հաջիքենդի մոտ կողոպտված մարդկանց այլ իրեր։

Մեջ եմ բերում այդ ավազակների մասին հուսալի աղբյուրներից քաղված որոշ հավաստի տեղեկություններ.

Սպանված Խեչո Եվինովը փախստական է դարձել անցյալ տարվա սեպտեմբերին, ոստիկանական պրիստավ Տատարինովի անհաջողությունից հետո, որը Ելիզավետպոլի գավառապետի հանձնարարությամբ ցանկացել է Խեչոյին ձերբակալել։ Նրա ընկերը՝ Նաջաֆ-օղլին, նա ինքը՝ Նաբի Դադաշը, փախստական է դարձել իր մի համագյուղացուն ու նրա որդուն սպանելուց հետո։ Նա մեղադրվում է բազմաթիվ կողոպուտների և սպանությունների մեջ, այդ թվում Բորչալվի և Ղազախի գավառների սահմանագծում շրջող մի հայ պարեկի։ Փախստական զինվոր Եգոր Պապիևը գնդից փախչելուց հետո գավառի ոստիկանության կողմից ձերբակալվել և հանձնվել է

Ղազախի առաքման հավաքակայանին՝ կրկին իր գունդն ուղարկվելու համար։ Բայց հավաքակայանից փախել ու Հաջիքենդի կողոպուտի նախօրյակին միացել է Խեչոյին։ Ինչ վերաբերում է Խեչոյի 5-րդ ընկերոջը՝ Իսմայիլ-օղլի Ղամբարին, ապա նա ավելի քան 10 տարի առաջ, Բորչալվի գավառում մարդ է սպանել ու դատապարտվել տաժանակրության։